



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Զորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. ու մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿՋԲԱՂԱԲՑՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼՍՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇՆԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	54
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈԼՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈԸՉԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Մարգարյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ Ե ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԱՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Արմենուհի Մարտիրոսյան
Մարինե Մկրտչյան
Երևանի պետական համալսարան

Հոդվածը նվիրված է դիվանագիտական բառապաշարի առանձնահատկություններին: Այն ներկայացնում է պատմության ընթացքում լատիներենից փոխառված բառերը դիվանագիտության լեզվում, այդ բառերի ինտեգրումը դիվանագիտության բառապաշարին և տարիների ընթացքում տեղի ունեցած բառիմաստի հնարավոր փոփոխությունները: Հոդվածում նաև ներկայացվում է դիվանագիտության ենթալեզվի տերմինաբանական համակարգի կարևորությունը բառապաշարի քանակական և որակական հարստացման առումով:

Բանալի բառեր. *դիվանագիտության լեզու, փոխառություն, դիվանագիտական բառապաշար, տերմինաբանական համակարգ:*

Ներածություն

Դիվանագիտությունը պետությունների միջև պաշտոնական հաղորդակցման ձև է: Միջպետական հաղորդակցման համար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր ենթալեզու թյուրընթացումից խուսափելու համար: Դիվանագիտական նպատակներով օգտագործվող այս ընդհանուր լեզուն հաճախ կոչվում է *դիվանագիտության լեզու*: Տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների միջև հաղորդակցման միջոց է հանդիսանում այն լեզուն, որը լայնորեն օգտագործվում է այլ լեզուներով հաղորդակցվող մարդկանց համար որպես հաղորդակցման միջոց (lingva franca): Լատիներենը դասական կայսրությունների լեզուներից էր և հանդիսանում էր եկեղեցու և պաշտոնական գրագրության լեզու Հռոմում և Բյուզանդիայում: Միջնադարում լատիներենի՝ դիվանագիտության ընդհանուր ենթալեզու լինելը և դրա համատարած օգտագործումը նպաստեց նրան, որ այն ունենա իր նշանակալի դերը դիվանագիտական մշակույթի մեջ: Սա է պատճառը, որ անգլերեն դիվանագիտության լեզվում կան բազմաթիվ լատիներեն բառեր (ինչպես ժամանակի ընթացքում անգլիականացված, այնպես էլ լեզվում իրենց գործածությամբ անփոփոխ), որոնց իմացությունը և ճիշտ կիրառումը չափազանց կարևոր են դիվանագետի համար:

Լատիներեն փոխառությունները և դրանց գործածման յուրահատկությունները դիվանագիտության լեզվում

Ազգերի միջև հաղորդակցումն անհնար է առանց դիվանագիտության: Դիվանագիտության հաղորդակցումն ունի երկար պատմություն և միշտ կարևոր է եղել միջազգային հարաբերությունների կառուցման և պահպանման գործում: Դիվանագիտության լեզուն այդ երկար պատմության հստակ արտացոլումն է: Այն բնորոշվում է բառերի և արտահայտությունների, շարահյուսական կառույցների ճշգրիտ ընտրությամբ: Դարերի ընթացքում ժողովուրդների միջև հարաբերությունների ամրապնդման գործընթացում զարգացել է հատուկ կրկնվող կառույցների օգնությամբ լեզվի համակարգված գործածումը:

Դիվանագիտական լեզու արտահայտությունն օգտագործվում է երեք տարբեր իմաստներով: Նախ և առաջ, դա հենց այն լեզուն է (լինի դա անգլերեն, ֆրանսերեն կամ իսպաներեն), որն օգտագործվում է դիվանագետի կողմից բանակցությունների կամ նամակագրության ժամանակ: Երկրորդ իմաստով այն վերաբերում է քարացած արտահայտություններին, որոնք դարերի ընթացքում դարձել են դիվանագիտական բառապաշարի անբաժան մասը: Երրորդ իմաստով այն օգտագործվում է նկարագրելու լեզվական մի ոճ, որը դիվանագետին հնարավորություն է տալիս քաղաքավարի կերպով արտահայտելու բարդ կամ վիճահարույց գաղափարները:

Դիվանագիտական բառապաշարի հարստացումը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից. 1. բառերի և տերմինների կլանում միևնույն լեզվի այլ ենթալեզուների տերմինաբանական համակարգից, և 2. բառերի և տերմինների կլանում այլ լեզուներից (պատմական տեսանկյուն):

Կարևոր է նշել այն փաստը, որ դիվանագիտական բառապաշարը տարբեր տերմինաբանությունների ամբողջություն է, որտեղ գերակշռող մասը կազմում են իրավաբանական և տնտեսագիտական տերմինները: Լեզվաբանական միտում է այն, որ բառապաշարի համակարգի զարգացման և նորացման ընթացքում, գիտության տարբեր ոլորտների տերմինները միախառնվում են ինտեգրման գործընթացի շնորհիվ: Տերմինաբանական համակարգում տարածված երևույթ է, որ գիտության մի ենթալեզուն այլ ենթալեզուներից տերմիններ է կլանում: Այս դինամիկ երևույթը հանգեցնում է բառապաշարի հարստացմանը և՛ քանակական, և՛ որակական առումներով: Տնտեսագիտական, իրավաբանական, հասարակական և քաղաքական տերմինաբանությունները հանդիսանում են դիվանագիտական ենթալեզվի աղբյուր: Դիվանագիտության լեզվի ձևավորման գործընթացը շարունակվում է առ այսօր, քանի որ միջազգային մակարդակով քննարկվող շատ խնդիրներ տնտեսական և իրավական բնույթի են: Այս կերպով դիվանագիտական տեքստերում առկա տնտեսական, իրավական և այլ տերմինաբանություններ ձեռք են բերում որոշակի դիվանագիտական տերմինների հատկանիշներ: Այսպիսի միաձուլումը հանգեցնում է տարբեր ոճերի միավորմանը՝ ստեղծելով հաղորդակցման հատուկ տեսակ, որը հայտնի է որպես դիվանագիտական ենթալեզու:

Պատմության տեսանկյունից դիվանագիտության լեզուն մի ենթալեզու է, որն ընդգրկում է փոխառված բառեր տարբեր լեզուներից: Հարկ է նշել, որ այլ լեզուներ-

րից բառերի փոխառման գործընթացը ազգերի միմյանց հետ ուղղակի շփման արդյունք է: Դիվանագիտության լեզվի պատմության ուսումնասիրության ժամանակ ակնհայտ է դառնում, որ բազմաթիվ դիվանագիտական բառեր փոխառվել են այլ լեզուներից, որոնց շարքում հատուկ ուշադրության է արժանի լատիներենը, որից փոխառված բառերը կազմում են դիվանագիտության լեզվի բառապաշարի զգալի մասը: Լինելով կիրթ և զարգացած քաղաքակրթության լեզու, լատիներենը նաև այն լեզուներից մեկն էր, որի միջոցով շատ հունարեն բառեր են ներթափանցել դիվանագիտական բառապաշարի մեջ: Դիվանագիտական լեզվի պատմության մեջ կարևոր իրադարձություն էր քրիստոնեության ընդունումը, քանի որ այն նպաստեց գրավոր լատիներենի զարգացմանը: Կարճ ժամանակահատվածում լատիներենի ազդեցությունը տարածվեց նաև դիվանագիտության ոլորտում, քանի որ եկեղեցին ներգրավված էր միջազգային գործերում: Այն փաստը, որ երկար ժամանակ միջազգային փաստաթղթերը լատիներենով էին գրվում բացատրում է, թե ինչու նույնիսկ այսօր դիվանագիտության լեզվում այդքան մեծ քանակով լատիներեն բառեր են գործածվում:

Խոսելով դիվանագիտության լեզվում լատիներենի ազդեցության մասին հարկ է նշել երկու տեսակի փոխառություններ. 1. փոխառություններ, որոնք ձուլվել են անգլերեն լեզվին պատմության ընթացքում և ունեն անգլերեն լեզվին բնորոշ ձև և արտասանություն, և 2. անփոփոխ փոխառություններ (*Latinisms*), որոնք արժանի են ուշադրության և՛ իրենց յուրացման, և՛ ճիշտ գործածման առումով:

Առաջին տեսակի փոխառությունները ներթափանցել են դիվանագիտության լեզու և դարձել են անգլերեն բառեր իրենց ձևով և արտասանությամբ, ինչպես օրինակ՝ *accreditation, convention, protocol, pact, consul, consensus, credentials, denunciation, legation, nuncio, plenipotentiary, sanction, signatory, ultimatum, agenda* և բազմաթիվ այլ բառեր: Լատինական ծագում ունեցող բառերն այսօր օգտագործվում են նշելու դիվանագիտության վերացական հասկացությունները, դիվանագիտական պաշտոնները և դիվանագիտական գործունեության հիմնական տեսակները: Այս բառերը գործածելիս կարևոր է իմանալ, թե երբ և ինչու է փոխառվել տվյալ լատիներեն բառը, ինչ էր այն նշանակում լատիներենում, ինչպես է նրա իմաստը փոխվել ժամանակի ընթացքում և ինչ է այն նշանակում ներկայիս դիվանագիտության լեզվում: Ներկայացնենք մի քանի օրինակ իրենց լատիներեն և անգլերեն սահմանումներով:

<i>Consul</i>	Latin (<i>consul</i>) – magistrate in ancient Rome Modern usage in English – an agent appointed by a government or ruler to represent the interests of its subjects and traders in a foreign place
<i>Credentials</i>	Latin (<i>credentia, credentialis</i>) – letters entitling the bearer to certain credit of confidence Modern usage in English – a letter or certificate giving evidence of the bearer’s identity or competence
<i>Legation</i>	Latin (<i>legatio</i>) – the office of an ambassador Modern usage in English – 1. a diplomatic mission headed by a

	minister, 2. the official residence and office of a diplomatic minister, 3. the mission or business of a diplomatic envoy
<i>Nuncio</i>	Latin (nuntius) – messenger, envoy Modern usage in English – a Vatican representative accredited as an ambassador to a civil government that maintains official diplomatic relations with the Holy See
<i>Plenipotentiary</i>	Latin (plenipotens, plenipotentianus) – having full power Modern usage in English – (esp of a diplomatic envoy) invested with or possessing full power or authority
<i>Pact</i>	Latin (pactum) – agreement, contract Modern usage in English – a formal agreement between two countries, groups or people, especially to help each other or to stop fighting
<i>Sanction</i>	Latin (sanctio) – decree, ordinance Modern usage in English – 1. approval or encouragement given to an action, 2. (usually in plural) a penalty for disobeying a law or rule

Փոխառված տերմինների և հասկացությունների ուսումնասիրման ընթացքում կարող ենք հանդիպել նաև բառերի, որոնք ներթափանցել են անգլերեն լեզու մեկից ավելի լեզուների միջոցով, ինչպես օրինակ՝

<i>Diplomacy</i>	Greek <i>diploma</i> – license, chart, paper folded in two Latin <i>diploma/diplomaticos</i> – official document conferring a privilege French <i>diplomatie</i> – the conduct of the relations of one state with another by peaceful means English <i>diplomacy</i> – 1. the profession, activity, or skill managing international relations, 2. the conduct of the relations of one state with another by peaceful means, 3. skill and tact in dealing with people
<i>Protocol</i>	Greek <i>protokollon</i> – first sheet glued onto a manuscript Latin <i>protocollum</i> – draft, official account, diplomatic document French <i>protocol</i> – formula of diplomatic etiquette English <i>protocol</i> – 1. the formal etiquette and code of behavior, precedence and procedure for state and diplomatic ceremonies, 2. a memorandum or record of an agreement, esp one reached in international negotiations, 3. an amendment to a treaty or convention, 4. a formal international agreement or understanding on some matter.

Դիվանագիտության լեզվում մեկ այլ մաս են կազմում անփոփոխ փոխառությունները (Latinisms կամ non-assimilated borrowings): Հարկ է նշել նրանց կարևոր

րությունը դիվանագիտության լեզվի մեջ որպես պատրաստի արտահայտություններ, որոնք հեշտացնում են հաղորդակցումը: Անժխտելի է անփոփոխ փոխառություններին ծանոթ լինելու կարևորությունը, քանի որ նրանք դիվանագիտության լեզվի բառապաշարի մեջ հատուկ շերտ են կազմում: Անգլերեն լեզվում անփոփոխ փոխառություններն իրենցից ներկայացնում են որոշակի դժվարություն, ուստի պետք է հաշվի առնել որոշ ասպեկտներ: Ինչ վերաբերում է այդ բառերի արտասանությանը, ապա պետք է նշել, որ կան տերմիններ, որոնք արտասանվում են ըստ լատիներեն լեզվի կանոնների, սակայն կան նաև բառեր, որոնք ունեն և՛ լատիներեն, և՛ իրենց համապատասխան անգլերեն արտասանության տարբերակը: Լատիներեն բառերը նաև ունեն հոգնակի թիվ կազմելու տարբեր կանոններ, ավելին, կան բառեր, որոնց հոգնակի թիվը կազմվում է անգլերեն լեզվի կանոնների համաձայն: Կարևոր է ուսումնասիրել նաև տվյալ բառի միջավայրը, այսինքն՝ նախադասության մեջ ինչ բառակապակցություններում է գործածվում տվյալ տերմինը: Հարկ է նշել, որ լատիներեն անփոփոխ փոխառությունները հիմնականում անգլերեն բառերի հետ կազմում են բառակապակցություններ: Ստորև ներկայացնում ենք դիվանագիտության լեզվում գործածվող անփոփոխ փոխառությունների օրինակներ.

<i>Ad hoc</i>	Latin – for this, for a particular purpose only <i>ad hoc committee, ad hoc diplomacy, ad hoc decisions</i>
<i>Ad interim</i>	Latin – in the meantime, for the intervening time, abbr. <i>ad int to serve ad interim, ad interim measures</i>
<i>De facto</i>	Latin – in practice but not necessarily ordained by law <i>de facto recognition, de facto freedom, to declare de facto</i>
<i>De jure</i>	Latin – in practice, in law, by right, legally <i>de jure recognition, de jure government</i>
<i>Persona non grata</i>	Latin – unacceptable or unwelcome person plural – <i>personae non gratae</i> <i>to declare persona non grata</i>
<i>Modus vivendi</i>	Latin – agree to disagree; (in diplomacy – a temporary peace treaty) plural – <i>modi vivendi</i> <i>to establish a modus vivendi, to reach a modus vivendi</i>
<i>Bona fide</i>	Latin – with good faith <i>a bona fide agreement</i>
<i>Casus belli</i>	Latin – occasion of war <i>to be seen as the casus belli</i>
<i>Decorum</i>	Latin – etiquette and manners, a requirement for correct behavior in polite society
<i>Mutatis mutandis</i>	Latin – with the necessary changes having been made or carried out abbr. <i>m.m.</i> <i>to apply mutatis mutandis</i>

Ne varietur

Latin – not changed; (in diplomacy – no amendments are allowed in the document.

Լատիներեն անփոփոխ փոխառությունները դիվանագիտական լեզվի բառապաշարի հատուկ ենթախումբ են կազմում՝ օգնելով պահպանել դիվանագիտական հաղորդակցման հատուկ ոճը: Մակայն պետք է նշել, որ դրանք հիմնականում գործածվում են վերբալ նոտաներում, նստաշրջանների աշխատանքային փաստաթղթերում, պայմանագրերում և համաձայնագրերում: Որոշ դեպքերում փոխառությունների գործածումը չի սահմանափակվում միայն դիվանագիտական հաղորդակցմամբ: Դրանք կարող են օգտագործվել պաշտոնական լեզվում՝ մասնավորապես իրավաբանական փաստաթղթերում, լրատվամիջոցներում:

Եզրակացություն

Դիվանագիտության լեզվում լատիներեն փոխառությունների գործածումը արժանի է հատուկ ուշադրության: Լատիներեն փոխառությունները հարստացրել են անգլերենի բառապաշարը և դարձել են դիվանագիտության լեզվի անբաժանելի մասը: Փոխառությունների իմացությունը և ճիշտ գործածումը համապատասխան համատեքստում չափազանց կարևոր է դիվանագիտական հաղորդակցումն արդյունավետ դարձնելու համար: Նաև շատ կարևոր է փոխառությունների ճիշտ կիրառումը, քանի որ դրանց սխալ օգտագործումը կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների: Լեզվական հմտությունների առումով, դիվանագետը պետք է ունակ լինի արդյունավետ կերպով դրանք կիրառի արագ զարգացող աշխարհում և ունենա իր ազդեցիկ խոսքը համաշխարհային հարթակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Berridge, G.R. and James, A. (2001) *A Dictionary of Diplomacy*. New York: Palgrave.
2. Coleman, J. (1995). *The Chronology of French and Latin Loan Words in English*. Transactions of the Philological Society.
3. Durkin, P. (2014). *Borrowed Words: A History of Loanwords in English*. Oxford-New York: Oxford University Press.
4. Feltham, R.G. (1998) *Diplomatic Handbook* (7th edition). London and New York: Longman.
5. Jespersen, O. (1982). *Growth and the Structure of the English Language*. Oxford: Basil Blackwell.
6. Kashchyshyn, N. (2013). *Rituality in Diplomacy. Terminological Embodiment*. Society for Cultural and Scientific Progress in Central and Eastern Europe. Retrieved from <http://www.scaspee.com>
7. Kurbulija, J., Slavik, H. (2001). *Language and Diplomacy*. // Msida, MSD 06. Malta.
8. Rayevskaya, N. (1957) *English Lexicology*. Rayevskaya N. Kyiv: Kiyev State University.
9. (1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

Peculiarities of the Use of Latin Loan Words in the Language of Diplomacy

The article touches upon some peculiarities of the use of Latin loan words in the language of diplomacy. As any other language, the language of diplomacy has its peculiarities, specific vocabulary, set phrases, which diplomats use in their diplomatic activity. Latin loan words have enriched the English diplomatic vocabulary and become an inseparable part of the language of diplomacy. To make diplomatic communication effective it is crucial to get acquainted with loan words of Latin origin as they prevail in the language of diplomacy. The use of loan words is highly specific and exacting as wrong variations may have significant and undesirable consequences.

Особенности употребления латинских заимствований в языке дипломатии

Данная статья посвящена некоторым особенностям употребления латинских заимствований в языке дипломатии. Как и любой язык, язык дипломатии имеет свои особенности, характерный словарный состав, который используют дипломаты в своей профессиональной деятельности. Латинские заимствования обогатили английскую дипломатическую лексику, став неотъемлемой частью языка дипломатии. Знание заимствований и их правильное употребление в дипломатическом общении чрезвычайно важны, так как любые отклонения от общепринятых норм могут иметь нежелательные последствия.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrтчyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrтчyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // Investigations in Linguistics. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // The European English Messenger. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru